

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պարունական գիտությունների դոկտոր

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻՆ ՈՒ ՆՐԱ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսը (1780-1799 թթ.) մամակագրական աշխույժ կապերի մեջ էր 18-րդ դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման հնդկահայ կենտրոնի (Մադրասի քաղաքական հայրենասիրական խմբակ) ամենաեռանդուն գործիչներից մեկի՝ Ծափամիր Ծափամիրյանի հետ: Իր մամակներում Կաթողիկոսը Օ. Ծափամիրյանին մշտապես տեղեկություններ էր հայտնում Անդրկովկասում և, մասնավորապես, Հայաստանում տեղի ունեցած քաղաքական անցուդարձի, եկեղեցական խնդիրների, էջմիածնում ծավալված շինարարության և Գրիգոր Լուսավորչի անվան տպարանի աշխատանքների մասին: Նրանց մամակագրության մեջ քննարկման առարկա էին դարձել երկիրն օտար բռնակալ տիրապետությունից ազատագրելու, ժողովրդի լուսավորության գործն առաջ բռնելու խնդիրները:

Արդեն առիթ ունեցել ենք գրելու մրանց մամակագրության մասին¹: «Դիվան հայոց պատմության» մոտ շարքի առաջին և երկրորդ հատորներում լույս ենք ընծայել Օ. Ծափամիրյանին ու մրա հարազատներին հասցեագրված Ղուկաս Կարնեցու մի քանի անտիպ մամակներ²: Ստորև հրապարակում ենք Օ. Ծափամիրյանին ուղղված Ղուկաս Կարնեցու 13 հունիսի 1798 թվակիր մամակը՝ մրա դասեր՝ Թամարի մահվան կապակցությամբ, ինչպես նաև Օ. Ծափամիրյանի մահվան առթիվ մրա որդի Հովհաննեսին ու թոռանը՝ Նազար Հակոբյանին 1799 թ. ապրիլին Վեհափառի գրած ցավակցական մամակը:

Հարկ է մշել, որ ապահովության համար Կաթողիկոսը երբեմն Օ. Ծափամիրյանին, ինչպես և մի քանի այլ անձանց մամակները պատրաստում էր երկու օրինակից՝ «համօրինակ», և ուղարկում տարբեր ճանապարհներով: Այս ձևով է գրվել հրապարակվող մամակներից առաջինը և ուղարկվել Կ. Պոլսի վրայով, մյուսի ուղարկման վայրը չի մշված: Մեծ մասամբ ուղարկում էին նաև Բաղդադի, իսկ ոչ հաճախ նաև Պետերբուրգի վրայով: Երբեմն այդ «համօրինակ» մամակները գրվում էին տարբեր ժամանակներում և շարադրված լինելով մույն հարցերի շուրջ՝ առանձին դեպքերում որոշ չափով տարբերվում էին միմյանցից: Գլուխ քահանա Աղանյանցը, որը մեծ վաստակ ունի կաթողիկոսական փաստաթղթերի հրատարակության ասպարեզում, «Դիվան հայոց պատմության» Ա-Բ հատորում

¹ Վարդան Գրիգորյան, Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի մամակագրությունը Ծափամիր Ծափամիրյանի հետ, «Էջմիածին», 1998, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 103-113:

² Դիվան հայոց պատմության, Նոր շարք, Գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա, 1780-1799, Աշխատասիրությամբ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, նույնը, հատոր Բ, Երևան, 2003:

³ Դիվանի հայոց պատմության, գիրք Ա-Բ (1780-1884), Թիֆլիս, 1893, էջ 30-31:

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ԾԱՀԱՄԻՐ ԾԱՀԱՄԻՐՅԱՆԻՆ

[1798 թ. 13 հունիսի] Թուրք ի Հնդկա ի քաղաք Մատրաս առ աղայ Շահամիրն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ յամի Տեառն 1796 դեկտեմբերի ի 1, հանդերձ ծանուցմամբ որպիսութեան կողմանցս, և մխիթարութիւն վասն մահուան մեծ հարսիւն իւրոյ՝ Թամար խաթունի⁴:

Յորմէ ճշմարիտ սիրով և հոգևոր օրհնութեամբ և խաղաղական ողջումիւ, և Սրբոյ Իջման տեղոյս Քրիստոսի առատածաւալ շնորհիւ, ծանուցումն լիցի ազնուամեծար սիրելւոյդ մերոյ, հարազատ որդոյ և քաջընտիր բարեկամի Սրբոյ Աթոռոյս՝ աստուածաւեր և բարեպաշտ, վսեմախոհ և ճոխապատիւ աղայ Շահամիրիդ Սուլթանումեան:

Քանզի թուղթն ազնուոյդ, գրեցեալն յամի Տեառն 1796-և ի դեկտեմբերի 1, առ մեզ ժամանեաց յայսմ ամի, որ է ըստ թուաբերութեան Փրկչին 1798 և ի փետրվարի 15 ի վերայ Կոստանդնուպօլսոյ: Որով նախ ծանուցեալ զքաջառողջ գոյոյն անձինդ պատուականի և դիր սրտի գտեալ՝ փառս մատուցաք Աստուծոյ:

Եւ ապա զամենայն օգտաւոր առաջադրութիւնս, թէ ի թուղթն յայն և թէ ի նախագուշակն տեսեր տպագրեցելում, մի ըստ միոջէ ըմբերցեալ, հաւանեցաք բարիոք դիտաւորութեանցդ առ ստացումն արեւելաբնակ ազինս մերոյ զշահաւետութիւն բարօրութեան: Բայց ի նոյն յիշեալ թուոյն և յօգոստոսի 12 գրեալ թուղթն քո մինչև ցայսօր ևս ոչ ժամանեաց մեզ, թուի թէ ի խուռն վրդովմանց նախանցեալ ամացն ուրեք ուրեք արգելեցան կամ թէ վատնեցան: Այլ առ մեզ ժամանեալ թղթովդ իմացեալ մեր զհասանիւն առ քեզ թղթոյն մերոյ յամի Տեառն 1796 և ի մայիսի ելն գրեցելոյ, ստացաք զմիամտութիւն: Յայնմհետէ և այսր ոչ ևս յաջողեցաւ մեզ գրել ինչ առ քոյդ ազնուութիւն, զի ոչ երբեք բացաք զաչս ի մրկեալ ալեաց թշնամեաց մերոց հեթանոսաց:

Վասն զի թեպէտ ընդարձակ բացաւ դուռն այցելութեան ի հիւսիսոյ, բարեյօժար կամեցողութեամբ երջանիկ և մեծանուն կայսերուհուն⁵, և քաջազէն զումարտակ զօրաց նորա նուաճեալ ընդ ձեռամբ գդուռն երկաթի և անցեալ մինչև ցդարան դաշտ բանակեցան, յորոց և մասն մի եկեալ մտին ի Գանձակ Աղուանից, յամի Տեառն 1796, յամսեանն դեկտեմբերի: Ընդ որս էր և արիաջան Յովսէփ արքեպիսկոպոսն:

Ուստի և յոյս եղև մեզ, թէ մերձ ընդ մերձ հուպ լիցին առ մեզ, սակայն առ տարաբախտութեան մերոյ, օրհասին մահու ժամանեալ յիշեցելոյ մեծի կայսերուհուն, խափանեցաւ

⁴ Թամար խաթունը ոչ թէ Օ. Շահամիրյանի մեծ հարսն էր, այլ դուստրը: Դա երևում է տպագրվող նամակի մեջ եղած վկայությունից՝ «... ծանուցեալ էր զվախճանմանէ զգաստամիտ և համեստ դստերն քոյ՝ ազնուհի Թամար խաթունին»: Նույն ժամանակ (1799 թ. ապրիլին) Ղուկաս Կաթողիկոսը գրել է մեկ այլ ցավակցական նամակ տիկ. Թամարի մահվան կապակցությամբ, որի վերնագիրը բերում ենք ստորև. «Թուրք ի Մատրաս առ պարոն Յարութիւն Թաղեանց և առ որդին իւր և գործակալն մեր՝ պարոն Յակոբն. մխիթարութիւն Թամարայ, որ էր կինն նորա և մայր սորա, և դուստր աղայ Շահամիրին: Եւ դարձեալ մխիթարութիւն յաղագս նորին Օահամիրին մահուան ևս, և յիշումն յառաջագոյն գրեալ թղթոցն մերոց» (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 2350-2351):

⁵ Խոսքը վերաբերում է Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա Երկրորդին (1729-1796 թթ.):

գործն օգտակարագոյն աշխարհի: Ըստ որում հարազատն նորին նորապսակ յաջորդն⁶ դարձ առնել ետ զօրացն, զամենայն ընդ ձեռամբ արկեալսն ևս թող[նե]լով հնոց տիրո-դարձ առնել ետ զօրացն, զամենայն ընդ ձեռամբ արկեալսն ևս թող[նե]լով հնոց տիրո-դացն աներչաց: Յայսմհետեւ աստի կրկին զօրացեալ դառնաշունչ վիշապին ներքինոյ⁷ ա-ռաւել ևս կատաղեցաւ, որ և զՆախչումանու իշխօղն⁸ տարեալ առ ինքն կտրացոյց և ինքն ել յայսկոյս և զծանրաքարոյ եղբայրն⁹ իւր յղեաց լերեան իշխօղ և սպարապետ կող-մանցս, որոյ չև ևս եկեալ աստ, Երեւանու խանն¹⁰ դիմեաց առ հօր թոնաւորն: Զոր ի տե-սանելն նորա, յղեաց ի Թէհրան, արկեալ ի վերայ զծանրագոյն տուգանս, և կողոպտել ետ զամենայն ինչս:

Իսկ մեք, զի յառաջագոյն դեռ հիւսիսայնոցն ի Գանձակ գոլով, ընծայ էաք յղեալ առ ինքն թոնաւորն, ոչինչ ոյս ունէր առ մեզ, այլ մանաւանդ ֆէրմանս¹¹ էր տուեալ, և խիլա-յիւք¹² դարձուցեալ զընծայատարսն: Յետ այսոցիկ յամենան մայիսի 1797 թուոյն, ժանտ եղբայրն Սարտար կոչեցեալ, էհաս յերկիրն մեր, որոյ ընդառաջ ելեալ բերաք լերեան: Եւ ինքն պատուով ընկալաւ զմեզ: Բայց ի կամիլն մեր զընծայ մատուցանել, դարձեալ առա-ջին ազահութիւն ի գործ էարկ, որ թեպէտ յաճե եղբօրն չկարէր ինչ առնել, սակայն և յա-զահութենէն ոչ զիջանէր: Վասն որոյ անելի քան զամիս մի կացաք վարանեալ լերեան, վերջապէս կիսով չափ ետուք, և դարձաք ի Սուրբ Աթոռս¹³:

Յայնմ միջոցի շահ ասացեալն մերձ լԱրտաիլ բանակեալ գոլով, ի լսելն զփախստենէ Արցախու տիրողին¹⁴ ի դղելէն իւրմէ առ կովկասայինսն, ինքն զբանակն թողեալ քանի հազար զօրօք, հապճեպ հասեալ և մտեալ էր ի դղեակն: Մէլիք Զումշուտն և այլք ելեալ էին ընդառաջ, և մէլիք Ապովն ևս ընդ Գեանջայու խանին զնացեալ էր առ նա: Այլ մինչ նոր էր սկսեալ թափել թոյնս իւր ի բնակիչսն, յետ 6 կամ 7 ատուրց մտանելոյն, ակնարկու-թեամբ Աստուծոյ արդարութեանն խողխողեցեալ էր ի սպասաւորաց իւրոց և բարձեալ չարն ի միջոյ, որոյ լուրն ի մերձ յիշեալ թուոյ յունիսի քանիսն էհաս լերեան: Եւ դժմեալ սարտարն, որ զեղջիւրս ածէր յայս կոյս և յայն կոյս, նկուն եղեալ եմուտ ի բերդն, և յետ ատուրց ընդ բերդապահացն կորեան:

⁶ Նրա հաջորդն էր Պաւել Առաջին կայսրը (1754-1801 թթ.):

⁷ «Ներքինին» Աղա Մուհամադ խանն էր (1742-1797 թթ.), որն իրեն Իրանի շահ հռչակեց 1796 թ.:

⁸ Նախիջևանում այդ ժամանակ իշխում էր Քյայքալի խանը: Նա շահի հրամանով կտրացվում է և հետո բանտարկվում: Ազատվելուց հետո նա վերադառնում է Նախիջևան, իսկ այնտեղից էլ անցնում Երևան, ուր հյուրընկալվելով իր բարեկամ Մահմեդ խանի կողմից՝ ակտիվորեն մասնակցում է նրա գործերին: Հայտնի է, որ 1800 թ. նա է գլխավորել Օտրագյալի վրա հարձակում գործած Երևանի խանի զորքը (տե՛ս Վ. Ռ. Գրիգոր-յան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800), Երևան, 1958, էջ 181):

⁹ Ծաֆի եղբայրը Աղիդուլի խանն էր, որն Աղա Մուհամադ շահի սպանությունից հետո ձերբակալվում է նորընծա Ֆաթալի շահի կողմից և կտրացվում (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 559թ-560ա):

¹⁰ Երևանի Մահմեդ խանը ձերբակալվում է և կողոպտվում շահի հրամանով:

¹¹ Ֆերման (պրսկ.) - հրաման, հրամանագիր:

¹² Խիլայ (արաբ.) - նվեր:

¹³ Ղուկաս կաթողիկոսը 38 օր Երևանում մնալուց հետո ստիպված է լինում սանատ (պարտամուրհակ) տալ Ալիդուլի խանին (Մատենադարան, ձեռ. 4501, էջ 459թ):

¹⁴ Այն ժամանակ Օուշիում իշխում էր Փանահ խանի որդի Իբրահիմ խանը:

Մնացորդ բնակիչքն Տփլիսու, որք լուեալ զգալուստ ներքինոյն ի Օուշի, զարհուրեալք կամէին ցրուիլ, և յորդորմամբ Յովսէփ արքեպիսկոպոսին փոքր մի դադարեցան, նոքա ևս զերծան ի կատաղութեան անօրինին ի բառնիլ կենաց նորա: Եւ չքանալի սարտարն, որ զմաց ի Թէհրան առ ի թագաւորել, զոկեցաւ յաչացն, զի Բաքայիսան յաջորդեալ զտեղի հօրեղբօրն, կուրացուցեալ է զնա: Փառք Աստուծոյ, որ զիստ զչարսն չարեաւ կորուսանել: Եւ թէ այլ ևս ի՞նչ անցք անցին յերկիրս և ի կողմանս, աւելորդ է գրելն, զի ըստ զազանացն ամեհեաց և վարք իրեանց:

Այլ յետ ներքինոյ կործանմանն, մէլիք Ջումշուտն կասկածեալ յիբրահիմ խանէն, որ դառնալոց էր ի Կովկասու, ամենայն տամբն խոյս ետ ի Տփլիս և ընդ Յովսէփ արքեպիսկոպոսին զմացին ի դուռն նորոյ կայսեր: Եւ մէլիք Ապովն ևս քանի հարիւր տուն ժողովըրդովք իրովք չու արար ի տունն Վրաց և կայ այժմ ի Պօլմիսուձոր կոչեցեալ գաւառին: Եւ Դարբանդու հայքն ևս տունք ԵՄ (500) ի դարձի զօրացն կամաւ իրեանց չուեցին ընդ նոսա յեկիրն Ռուստաց, որոց զորպիսութիւնն ի Յովսէփ արքեպիսկոպոսէն ունիս իմանալ:

Եւ մեք գրեցաք զթուղթ շնորհաւորութեան առ նորապետն կայսրն, և առ վազիրն և առ ոմանս եպիսկոպոսս, ծանուցանելով զոր ինչ հարկն էր, աղերս արկանելով վասն մեր ազանց: Լսեմք, թէ սիրով ընկալեալ է և սպասեմք պատասխանեացն մերոց¹⁵: Այլ զկնի անցիցն յիշեցելոց, Երևանու նախնին իշխօղն, որ կալանաւորեցեալ կայր ի ներքինոյն, ի յաջորդ շահէն արձակեցեալ ֆէրմանօք եկն նստիլ յԵրևան, արտաքոյ բերդին, յառաջ քան զսա ևս պահակք եկեալ մտին ի բերդն, դժնդակագոյնք քան զառաջին: Եւ մեք առ հարկին պահանջելոյ, յամսեանն փետրվարի և սմին ամի ընծայ յղեցաք առ նոր շահն¹⁶, վարդապետաւ միով: Ընդ որում և զեպիսկոպոս մի եղեալ առաքեցաք ի նուիրակութիւն Ջուղայու, որ ի շահէն նոմոս¹⁷ առեալ, այնպէս երթիցէ, համարձակ շրջագայիլ, և զամենայն հոգևոր պէտս եկեղեցեացն լնով: Որք հասեալ են առ շահն, նա հաճութեամբ ընկալեալ է և ֆէրմանօք և խիլայիք արձակեալ:

Բայց ի վերայ ամենայնի, տխրութիւն մեծ է մեզ տանն Վրաց տակաւին չգտանելն զանդորրութիւն: Ջի Հերակլէս քաջընտիր արքայն Վրաց թէպէտ և ետես զկորուստ թըշմամոյն իւրոյ, և զուրախակցութեան թուղթս գրեցաք առ իրեարս, սակայն ի Թէլաւ բնիկ տեղին իւր հիւանդացեալ և անդէն կայ առեալ վասն զառամութեան, ի սմին տարւոյ փետրվարին առ Տէր փոխեցաւ: Որոյ զհոգին Տէր լուսաւորեցէ և սիրելւոյդ զերկար կեանս շնորհեցէ¹⁸:

Իսկ ի կենդանութեանն կտակաւ աւանդեալ էր իւրոցն և ամենայն իշխանացն՝ զաւագ որդին իւր զԳեօրկի խանն իմանալ իրեանց արքայ: Եւ զկնի վախճանմանն նա երևի յա-

¹⁵ Ռուսաց Պավել Առաջին կայսրին Ղուկաս Կարանցու շնորհավորական նամակը թվագրվել է 1797 թ. հուլիսի 22-ին: Կայսրի պատասխան հրովարտակը ուղարկվել է 1798 թ. փետրվարի 26-ին, որով նա հայտարարում է, թե «ողջ ազնիվ հայ ժողովրդին» վերցնում է իր կայսերական ողորմածության և պաշտպանության ներքո (Մատենադարան, Արխիվային բաժին, Ռուսական ցարերի և Նապոլեոն Ա-ի հրովարտակաները, № 2):

¹⁶ Նոր շահը Աղա Մուհամադ շահի եղբորորդի Բաքա խանն էր, որը ստացավ Ֆաթալի շահ անունը (Մատենադարան, ձեռ. № 4501, էջ 559-560ա):

¹⁷ Նոմոս (հուն.) - օրենք, կարգ, կանոն, կանոնական թուղթ, նամակ:

¹⁸ Բարթեղ-Կախեթի թագավոր Հերակլ Երկրորդը մահացել էր 1798 թ. հունվարի 11-ին, 78 տարեկան հասակում:

ջորդ, որում և մեք շնորհատրութեան թուղթ և ընծայա առաքեցաք¹⁹: Եւ Երեւանու խանն մտնելի ի մէջ, գթութիւն հպատակութեան գրեցոյց մմա առ մոր շահն: Այլ քաղաքացիքն յան-
ցեալ տարտոյ մոյեմբերին թէ լերկիտէ յարուցմանն լեզկեաց, և թէ մանաւանդ ի ժամտախ-
տէն ցրուեալք կան ի լեռնակողմն տեղիս, և դեռ չկարեն դառնալ ի քաղաքն: Եւ մորոգ ար-
քայն ևս ի Կախէթ կայ: Աստուած այցելութիւն արասցէ խղճալի քաղաքին մորոգութեան:

Արդ, խոհական սիրելիդ իմ, ահա անցք կողմանցս և երկրիս այսպէս, և կացութիւն
մերայնոցն ևս յայսցանէ վշտաւոր և լի ամենայն արհաւորք, իսկ եղանակքն զգուշութեան
և խոհեմաբար վարեցմանց, զորս գրեալ էիր, յայնժամ յաջողէին ի կիրառնով, յորժամ վե-
րոյշեալ դուռն այցելութեան ի բաց մնայցէր, այլ եթէ փութանակի դարձեալ փակեցաւ,
անօգնականք ի զօր հացին առնել զիմն: Ապաքէն վերստին մնամք ողորմութեանն Աս-
տուծոյ, որ զհարդ և կամիցի, այնպէս տնօրինեացէ վասն ազին մերոյ: Գոհանամք զՏեառ-
նէ ամենակարողէ, որ յայսքան բազմապատիկ ալէկոծութիւնս պահպանեցս զյարկս փա-
ռաց սրբութեան իւրոյ անդրդունելի յարբանեկացն Բելիարայ, հանդերձ պաշտօնէիւք և բա-
րեզարդութեամբք իւրովք, թէև վնասքն անցեալ ըստ չափ:

Յաղազս մուրակին մերոյ՝ Յակոբ եպիսկոպոսին, զոր գրեալ ժամանել զոյ ի Բումբա-
յի, յիրաւի և ինքն զերկուս թուղթս էր գրեալ մեզ անտի, ուր խաղաղութեամբ հասեալ էր:
Բայց զի գթութեան մեր առ ազնուութիւն ձեր, որ շուտով չէր յուղարկեալ, ոչ հաւանեցաք
ընդ այն, այլ Աստուծով մինչև ցհասանիլ այսմ գրոյ, ինքն ևս եկեալ լինի յաստուածապահ
քաղաքդ, և զամենայն ինչ խօսեցեալ ընդ սիրելիսդ:

Իսկ ընդ զանազան ծանուցմանց, մաս մեծաւ տխրութեամբ ծանուցեալ էր զվախճան-
մանէ զգաւատամիտ և համեստ դատերն քոյ՝ ազնուի Թամար խաթունին: Ընդ որ և մեք
տրտմեցաք, գիտելով թէ և սիրելոյդ ոչ սակաւ կսկիծ իցէ եղեալ: Բայց զի Աստուծոյ Ա-
րարչին է վճիռ ի վերայ հողեղինացս ամենեցուն, զինչ ունիմք առնել, եթէ ոչ, զփառս վեր-
առաքեալ բարերար կամաց մորին, որ Տէր է կենդանեաց և մեռելոց:

Արդ, կամք Նորա եղիցի օրհնեալ, և որ փոխեցան զմա յանցաւոր կենցաղոյս, արժա-
նացուցէ մտից երկնային առաքաստին ընդ երջանիկ սուրբ կանանցն իւղաբերից, որոց և
բարեպաշտական գործովքն հաղորդ էր, որպէս գիտեմք ի պատմութենէ մուրակաց մե-
րոց: Եւ զքեզ, յարգի սիրելիդ, հանդերձ ամենայն քոյանովքդ մխիթարեացէ և ողջ պահես-
ցէ պարագայաց ամօք, փոխանակ տրտմական կրիցն յոգնապատիկ ուրախութիւնս շնոր-
հելով ձեզ ամենեցուն:

Իմացաք և զլուրն ամենավմաս արարողութեանցն ֆրանսզաց, և զծովային ուղեգնա-
ցութեանցն վտանգս, և զպակասութիւնն վաճառաց, և զվնասակրութիւնն բազմաց, որոց
ստուգութեանն թուղթք մուրակին և այլոց ևս վկայեն: Տարակուսանք մեծ ընծայեցաւ մեզ
սակս ձախորդութեանց խղճալի մերայնոց: Խնդրեմք յԱստուծոյ իւր անհուն ողորմու-
թեամբն խաղաղութիւն շնորհել ամենայն աշխարհի և սրբոյ եկեղեցւոյ, ի բաց բառնալով
զհանրածուփ ալէկոծութիւնս՝ տարածեալ ընդ տիեզերս:

¹⁹ Հանի որ Երեւանի խանը Իրանից վերադառնալուց հետո թշնամաբար էր տրամադրված վրաստանի
մկատմամբ, Ղուկաս Կաթողիկոսը չի կարողանում ցավակցական մամակ ուղարկել Հերակլի մահվան կապակ-
ցությամբ և շնորհավորել Գիորգի XII-ի թագադրումը: Նա դա կարողանում է անել միայն այն ժամանակ, երբ
Երեւանի խանը մարդ է ուղարկում վրաստան (Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 40ա-40բ):

Զփակեթն²⁰ թղթոց քոց, գոր եղեալ էիր ընդ թղթոց մերում, հասուցանել ի Տիխիս, հաւատարիմ մարդկան ձեռօք ուղևորեալ եմք ի ձեռս պարոն Մանուչար Գուրջասպրին ի մարտի 17: Եւ յորոց անձանց և թուղթ գայցեն ի ձեռս մեր յանուն քո, ամբողջապէս առաքելոց եմք առ պատուականութիւն ձեր:

Ձոր ինչ ի վերոյ ծանուցաք, անցեալ եղելութիւնք էին, ի ներկայումս կացութիւն Պարսից խառնակ լսի և տեսանի, և կատարած իրաց ինչ ոչ մկատի, ի տեսանելն մեր զարծանիս իմանալոյ, գրելոց եմք սիրելոյդ:

Ողջ լեր ի Տէր, ի հրճուման մեր:

Գրեցաւ յամի Տեառն 1798 և ի յունիսի 13 ի Սուրբ Էջմիածին:

Աստուածապարզ և մխիթարութեամբ հանդերձ ողջոյն և օրհնութիւն առաքեմք ազնուածին որդւոյն քո և թողինդ՝ Քրիստոսի զօրացելոց և շքեղազարդից աղայ Յովաննէսին և աղայ Նազարին, և հարազատ զաւակաց և ընտանեաց նոցին: Նաև մտերիմ փեսային ձերոյ՝ խոհեմառատ պարոն աղայ Յարութիւնին Թաղեանց, և բարեշառաւիղ որդւոյ նորին և զործակալին մերում՝ պարոն աղայ Յակոբին, և ամենեցուն իսկ ձերայնոց և նոցայնոց, որք եղիցին մխիթարեալք ի Տէր և յանձնեցեալք ի խնամս նորին հաճապագ: Ամէն:

Երկու համօրինակ գրեցաւ թուղթս, որոց առաջինն է այս, որ ի վերայ Կոստանդնուպօլսոյ յուղարկեցաւ:

(Ձեռ. № 4501, էջ 2311-2314)

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՑՈՒ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ ԾԱՀԱՄԻՐ ԾԱՀԱՄԻՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

[1799 թ. ապրիլ] Թուղթ մխիթարութեան ի Մատրաս առ հանգուցեալ աղայ Ծահամիրի որդի աղայ Յովաննէսն և թոռն՝ աղայ Նազարն Յակոբեան վասն մահումն աղայ Ծահամիրին:

Յորմէ ժամանեցէ թուղթ քրիստոսաւանդ ողջունի և ճշմարիտ սիրոյ և երկնածիր մխիթարութեան, հանդերձ Սրբոյ Իջման տեղոյս նորին տրտմափարար շնորհին և մերով հայրական օրհնութեամբ և կարօտիւ ի վերայ հոգևոր որդւոցդ մերոց սիրեցելոց ի Քրիստոս, և լուսածնունդ զաւակացոյ Սրբոյ Աթոռոյս՝ բարեպաշտից և ազնուականաց, շքեղազարդից և պերճապատուից, աղայ Յովաննէսիդ Ծահամիրեան և աղայ Նազարիդ Յակոբեան, և բարեկարգ տան ձերում և ամենեցուն, որք ձեր են՝ ընտանիք, ազգականք և բարեկամք, ի Տէր խնդալ և մխիթարիլ:

(Ընդրք)

²⁰ Փակեթ (ռուս.) - փաթեթ, կապոց, ծրար:

Եւ ընդ օրհնութեանս աստուածայնոյ՝ գիտաւելիք ազնուագոյն սիրելիք մեր և հարազատ որդիք սրբոյ գահիս Էջմիածնի: Զի յանցելում ամին, որ էր ըստ թուական Փրկչին 1798 և ի յունիսի ամսեանն թուղթ գրեցաք առ ընտրելագոյն հաւատարիմ բարեկամն մեր՝ յաղայ Օահամիր գորովագութ հայրն միոյդ և պապն միսոյդ, ի պատասխանի յետին թըղթոյն նորա առ մեզ յամի Տեառն 1796 դեկտեմբերի 1 գրեցելոյ և ի մխիթարութիւն յաղագս վախճանման ազնուիքն քեռն ձերոյ թամարայ: Եւ մինչ յուսայաք այլևս ընդունիլ ի նմանէ զթուղթս սիրոյ ի մխիթարութիւն բազմապատիկ նեղութեանց մերոց, զորս ունիմք ի բարբարոսաց, յեղակարծ իմն զգոյժ տրտմական լուսաք:

Եւ յոչ ախորժելն մեր ի լուր այնպիսոյ դառն համբաւոյ, զվիշրիկ թուղթ մի ընկալաք ի հոգևոր որդւոյն մերմէ և ի նուիրակէն ձերմէ՝ Յակոբայ անհրեպիսկոպոսին ի Կալկաթա-յու, գրեալ յամի Տեառն 1797...: Յորում կարի իմն թախծութեամբ ծանուցեալ էր զվճարումն կենաց վերոյիշեալ բազմագով բարեյիշատակ հօրն և պապուն ձերոյ՝ աղայ Օահամիրին: Որ յիրաւի և մեզ եղև տրտմութիւն մեծ, և էարկ զմեզ ի սուգ դառնագոյն: Եւ զհարդ ոչ լաց-ցութ զտարաբախտութիւն մեր, որ զբազում ոչ ունելով, ի սակաւում ևս զրկիմք օր ըստ օրէ, այժմ յայնպիսի սիրելոյ պակասելոյ, որ առաւել էր, քան զբազումս: Զաստուածաւերն ա-սեմ և զբարեպաշտն, զկատարեալն ձերութեամբ և զարդարեալն խոհեմութեամբ, զհոշակեալն մեծաւ համբաւով: Նա, որ օրինակ բարեաց էր յոգունց, փայլեցեալ համեմտութեամբ, և կարգաւորեցեալ խոհեմական վարութեամբ, օգտակար բազմաց և խնամատար իրազանց: Եւ առ սուրբ Աթոռս և առ մեզ յաւէտ հաւատարիմ, և առաքեցելոցն ի մէնջ ասպնջական և հանգուցիչ:

Արդ, վասն զի այսպիսի բարեշուք և երևելի անձն պակասեցաւ ի մէնջ և դուք հարազատքդ նորին ի սուգ մատնեցաք, կրկին յաւելան մեզ ցաւք: Բայց սակայն զի նա ըստ բարեգործութեանց իւրոց ունի արժանատրի վարձուց ըստ երգողին, թէ բարի առնէ Տէր բարեաց, և հանգիստ այն էր նմա, ըստ բանին Յօբայ ի կատարումն հասակին յաստեացս ցաւակրութեանց փոխիլ ի վայրս մշտնջենական հանգստեանն, որպէս զհասուն ցորեան ժողովելով ի շտեմարանս արքայութեանն, վասն որոյ ոչ է պարտ ընդ երկար սուգ առնուլ ի վերայ առնն բարեպաշտի, այլ փառս տալ անմահ Արարչին, որ Տէրն է կենդանեաց և մեռելոց և յարուցիչ ննջեցելոց: Յորմէ և հայցել արժան է զողորմութիւն առ հանգուցեալն և առ յետամնացոյ:

Ուրեմն, յիշելով զանուն հանգուցելոյն ի փրկարար սուրբ պատարագս, ասեմք՝ յուսաւորեցէ Տէր զհոգի նորին, և ընդ սրբոց դասուց պակազարդեալ, զմայլեցուցէ յանան-ցական փառս արքայութեանն երկնից: Եւ զհարազատ ժառանգ նորա, հանդերձ համայն ընտանեօք ձերովք մխիթարեցէ և սփոփեցէ, և երկարակեացս և փառազուարճս պա-հեցէ:

Եւ արդ, բաւական համարելով զոր մինչև ցարդ կրեալ էք զտխրութիւն, այսուհետև ի բաց փարատեցիք, և երկնատրան յուսով պատսպարեալ, մխիթարեցիք զձեզ և զամե-նայն ձերայինս: Մանաւանդ նախաձաւորք գտանելով բարեշնորհութեանց, զմանութիւն յուսահոգի հօրն և պապուն ձերոյ ի ձեզ բերեալ, զնորին բարեպաշտութիւնն և զազնուա-կան վարսն յանձինս երևցուցիք, և իմաստնաբար կառավարելով զհոշակեալ տունդ:

ձեր, զհամբաւ բարի տարածեսցիք առ ամենեսեան՝ ի փառս Տեառն և ի խնդութիւն բարեկամաց:

Եւ զնոյն շերմեռանդ սէր և զօգտակար հաւատարմութիւն, զոր ունէր նա առ սուրբ զահն և առ զահակալս սորին, այսուհետև դուք, օրհնեալքդ, ցուցչիք մխթարելով զվըտակցութիւնս մեր: Ըստ որում փոխանակ հօրն բարեպաշտի այժմ հարազատ ժառանգքդ նորին էք, զորս Տէր օրհնեսցէ և զօրացուցէ, և ի խնամս իւր պահելով, յամենայն փորձանաց փրկեսցէ, և առաջնորդեսցէ ձեզ ի բարութիւնս, ըստ հաճոյից կամացն իւրոց: Զի միշտ զբարի համբաւս ձեր լսելով, ուրախանայցենք ուրախութեամբ ի Տէր:

Գիտասցիք և զայս, սիրեցեալք մեր, զի զոր յիշեցաք ի վերոյ, թէ ի նուիրակ Յակոբ վարդապետէն ի Կալկաթու գիր ընկալաք, նա յայնմ թղթի նշանակեալ էր, թէ ի Մատրասու զամենայն որպիսութիւնս իմ և զործոյս գրեալ եմ երկարապէս: Բայց այն թուղթք նորա ոչ հասին մեզ, զի լուաք ստուգապէս, որ ի Բաղդատու մեծ պահարանաւ թուղթք եմ հանձնեալք երևանցի այլազգոյ ունեմն, զի առ մեզ հասուցէ, իսկ ամենի զօրք շահ կոչեցելոյն կամ սարտարին ընդ մէջ Թարվիզու և Խօյու կողոպտեալ եմ զայն թղթաբեր այրն, և զթուղթսն ևս կորուսեալ: Վասն որոյ յերկար ժամանակի չգիտեմք զորպիսութեանց նորա և կողմանցդ:

Արդ, գրեմք ազնուացդ, զի մինչև ցհասանիլ թղթոյս, եթէ Յակոբ շնորհապէրն վարդապետն դարձեալ ի Կալկաթու ի յօրհնեալ քաղաքդ Մատրաս, դեռ յայդր գտանիցի, և զգործն աւարտեալ իցէ, սիրով և խաղաղութեամբ ուղևորիցէք յայս կողմն: Եւ որպէս հոգելոյս աղալ Օահամիրն զթուղթն անպակաս առնէր ի մէնջ, նոյնպէս և բարի շառաւիղքդ նորին, զսիրամիշ գիր ձեր մի պակասեցուցիք ի մէնջ, ծանուցանելով զողջունէ ձերմէ, և զմեզապատշաճ գիտելիս կողմանցդ: Որով շնորհակալ լինելոց եմք զսիրելեացդ օրհնութեամբ:

Ողջ լերուք ի Տէր:

Գրեցաւ յամի Կենարարին 1797 և յապրիլի..., ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին:

Հայրական սիրով և երկնածիր մխթարութեամբ ողջոյն և օրհնութիւն տամք բարեպաշտունի ընտանեաց և աստուածապարզ և զաւակաց ձերոց, զգաստամիտ Հոնիսիմէ խաթունին և նորաբողբոջ Անայի խաթունին, ազնունի Մէրջան տիկնոջն և ծաղկափթիթ Յակոբջան աղազատէին և այլ ամենայն ձերայնոցն: Որք լիցին մխթարեցեալք Հոգւովն Սրբով և յանձնեցեալք միշտ ի պահ[ա]յանութիւն արարչական խնամոց նորին, և շնորհք Սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ինքեանս յարածամ. Ամէն: